

Հավելված  
ՀՀ կառավարության 2011 թ.  
օգոստոսի 25-ի նիստի N 33  
արձանագրային որոշման

## **Ֆ Ո Ւ Ն Կ Ց Ի Ո Ն Ա Լ Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ  
ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ**

Կազմված է

ՀՎԲՕՏԱ ծրագրի կողմից

## 1 Ներածություն

Սույն ֆունկցիոնալ նկարագրությունը (այսուհետ՝ ՖՆ) սահմանում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում (այսուհետ՝ ՊԵԿ) ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի (այսուհետ՝ ԱԱՀ ՎԱՀ) հիմնական ֆունկցիաների պահանջները: Ֆունկցիոնալ նկարագրությունը կազմված է ԱՄՆ ՄՁԳ/ՀՎԲՕՏԱ<sup>1</sup> ծրագրի կողմից հիմնվելով ՀՎԲՕՏԱ և ՊԵԿ-ի կողմից համատեղ մշակված «Ռիսկային չափորոշիչների և վերջինների դասակարգման աղյուսակներ» և «Ուղենիշներ ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի ներդրման» փաստաթղթերի վրա: Միաժամանակ ՖՆ փաստաթուղթը նպատակ ունի հստակ սահմանել ԱԱՀ ՎԱՀ-ի իրականացման մոտեցումը, համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ տվյալները և իրականացվող ֆունկցիաները, ինչպես նաև ծրագրի վերջնական արդյունքներն օգտագործողների համար:

ՖՆ-ն հիմք է հանդիսանում համակարգի նախագծման և մշակման համար: Օգտագործելով ՖՆ-ն որպես ուղեցույց՝ ծրագրավորողները կկազմեն տվյալների բազաներ և կմշակեն օպերացիոն ծրագրեր՝ բավարարելու ՖՆ-ում նկարագրված պահանջները: ՖՆ-ն կհանդիսանա ՊԵԿ-ում ԱԱՀ ՎԱՀ-ի վերջնական ներդրման որակի երաշխավորման (թեստավորման) և ՏՏ-ի տեսանկյունից համակարգի հաստատման ընթացակարգ:

## 2 ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի նկարագրությունը

ՊԵԿ-ի ԱԱՀ-ի վերադարձի ներկայումս գործող կարգը հիմնված է հարկային մարմնի կողմից ԱԱՀ-ի վերադարձի ոչ ավտոմատացված գործընթացի հիման վրա: Այս մոտեցման մեջ բացակայում են հետևյալ կարևոր հատկանիշները, ինչպես օրինակ՝ տեղեկությունների կենտրոնացված հավաքագրում, ռիսկային չափորոշիչների սահմանում, ԱԱՀ-ի հաշվարկի ռիսկայնության վերհանում, ավտոմատ վերադարձի հաստատում կամ ուսումնասիրությունների միջոցով հաստատում/մերժում և տեղեկատվության վերլուծություն տարբեր տեսանկյուններից:

### 2.1) Համակարգի նպատակը

ԱԱՀ ՎԱՀ-ն նպատակ ունի ավտոմատացնել ԱԱՀ-ի վերադարձի գործընթացը և աջակցել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համապատասխան աշխատանքին, որն ուղղված է հարկ վճարողների հաշվարկներում ներկայացված տեղեկությունների վերլուծությանը, ինչպես նաև ավտոմատացնել ԱԱՀ-ի վերադարձի հաստատման կամ մերժման գործընթացը: Համակարգի նախագծումը ներառում է ավտոմատացված համակարգի մշակումը՝ ապահովելու ռիսկային չափորոշիչների մշակման, հարկային հաշվարկների գնահատման և դասակարգման, հաստատման կամ մերժման, ինչպես նաև գործիքներ ստանդարտ և հատուկ հաշվետվությունների կազմման համար:

### 2.2) Համակարգի տարրերը

Համակարգի հիմնական նպատակները նկարագրված են ստորև.

1. ԱԱՀ ՎԱՀ-ի տվյալների բազա,

---

<sup>1</sup> ՀՎԲՕՏԱ – Հարկային վարչարարության բարեփոխումներին օժանդակող տեխնիկական աջակցություն

2. ռիսկային չափորոշիչներ,
3. բանաձևերի կազմում և կառավարում,
4. ԱԱՀ-ի հաշվարկների գնահատում և դասակարգում,
5. հաստատման գործընթաց,
6. ստուգման գործընթաց,
7. մերժման գործընթաց,
8. ստանդարտ և հատուկ հաշվետվությունների գեներացում:


### 2.3) Համակարգի մոտեցումը


ԱԱՀ ՎԱՀ-ի ներդրման մոտեցումը հիմնված է հետևյալ բաղադրիչների վրա.

1. Վերլուծական մոդուլի իրականացում ռիսկային չափորոշիչների, բանաձևերի և շեմի ստեղծման և կառավարման համար:
2. Հաշվարկի գնահատման և դասակարգման մոդուլ ԱԱՀ-ի հաշվարկների գնահատման և դասակարգման համար:
3. Հաստատման մոդուլ ԱԱՀ-ի վերադարձի հաստատումներին ընթացք տալու համար:
4. Ստուգման մոդուլ ուսումնասիրություններ նախաձեռնելու, ուսումնասիրության արդյունքները դիտելու և հաստատմանը/մերժմանն ընթացք տալու համար:
5. Հաշվետվությունների գեներացման մոդուլ տվյալների ճկուն և արդյունավետ վերլուծության համար:

### 2.4) Համակարգի շրջանակը

ԱԱՀ ՎԱՀ համակարգի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 1-ում: Սխեման ցույց է տալիս տվյալների հոսքը՝ սկսած ելակետային տվյալների սահմանումից Վերլուծական մոդուլի միջոցով, հաշվարկների գնահատում և դասակարգում ելնելով սահմանված շեմի արժեքից Հաշվարկների գնահատման և դասակարգման մոդուլի միջոցով, հաստատված վերադարձների մասին տեղեկությունների դիտում Վերադարձների հաստատման մոդուլի միջոցով, ստուգման արդյունքների դիտում Ստուգումների մոդուլի միջոցով և ավարտվում է տվյալների վերջնական վերլուծությամբ Հաշվետվությունների մոդուլի միջոցով:





Գծապատկեր 1. ԱԱՀ ՎԱՀ համակարգի տվյալների հոսք

### 3. Ֆունկցիոնալ պահանջներ

Այս բաժնում նկարագրվում են ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի ֆունկցիոնալ պահանջները, որոնց մանրամասնումը շատ կարևոր է հավաստիանալու, որ մշակված համակարգը բավարարում է օգտագործողի կարիքները:

#### 3.1) Համակարգում կիրառվող տերմիններ`

Dropdown	Բացվող ցանկ
Text box	Մուտքագրման դաշտ
Button	Կոճակ
Column	Սյունակ
Icon	Պատկերակ
Check box	Նշման դաշտ
Disabled	Պասիվացված
Text box; multi-line	Մուտքագրման դաշտ; բազմակի տողերով
Tree	Ծառ
Calendar box	Օրացուցային դաշտ
Row	Տող

Radio button	Ընտրման դաշտ
3-tier web-based application	Եռաշերտ ցանցային ծրագիր
related web technologies	Համապատասխան ցանցային տեխնոլոգիաներ

### 3.2) Համակարգի հիմնական ֆունկցիոնալությունը

ԱԱՀ ՎԱՀ համակարգը պետք է ներդնել հաշվի առնելով նախապես սահմանված պահանջները, որոնք կապահովեն համակարգի պատշաճ աշխատանքը: Տեղեկությունները ներկայացվում են երկու տեսակի էջերում՝ դիտման էջեր, որոնք ցույց են տալիս համակարգում արդեն պահպանված տեղեկատվությունը և նոր տվյալների ստեղծման էջեր՝ համակարգում նոր տեղեկություններ հավելելու համար: Դիտման էջերի մեծ մասում պետք է կիրառել որոնման տարբերակը՝ օգտագործողներին օգնելու ընդհանուր աղյուսակից հեշտությամբ որոնելու տվյալները: Որոնման պարամետրերը տարբերվում են ըստ էջերի և սահմանվում են դիտման աղյուսակի տվյալների հիման վրա:

Համակարգը պետք է դիտարկի Հարկատու 3-ի տվյալների բազայում առկա բոլոր չլուծարված հարկ վճարողներին:

ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի ներդնումից հետո այն ավտոմատ կերպով կգործարկվի յուրաքանչյուր ամսվա 20-ին: Ապա համակարգն անմիջապես կգնահատի հաշվարկները և դասակարգված հաշվարկները կհայտնվեն համակարգում:

Համակարգում ԱԱՀ-ի հաշվարկի համար ժամանակաշրջան պետք է դիտարկել ԱԱՀ հաշվարկի վերադարձի բաժնում (ԱԱՀ հաշվարկ, կետ 21) նշված ժամանակաշրջանը: Այդ ժամանակաշրջանը պետք է համակարգի կողմից դիտարկվի որպես հիմք համակարգի մշակման ընթացքում: Այն դեպքում, երբ ԱԱՀ հաշվարկի ժամանակաշրջանը ներկա ժամանակաշրջանն է, և համակարգում առկա են ճշգրտված հաշվարկներ, ապա համակարգի կողմից որպես վերջին հաշվարկ պետք է դիտարկի այն հաշվարկը, որը վերջինն է հանձնվել ՊԵԿ մինչև տվյալ ամսվա 20-ը:

### 3.3) Օգտագործողի դերերը և հասանելիությունը

ԱԱՀ ՎԱՀ-ն պետք է սահմանել, որպես օգտագործողից կախված համակարգ, որի հիմնական օգտագործողները կարող են լինել միայն ՊԵԿ-ի աշխատակիցները: Վերջիններս բաժանվում են երեք խմբի՝

ա/ օգտագործողներ, որոնք պատասխանատու են համակարգում ռիսկային չափորոշիչների սահմանման և բանաձևերի կազմման համար, ինչպես նաև գնահատված հաշվարկների չափորոշիչների ամփոփ տվյալների դիտման համար,

բ/ օգտագործող, որը պատասխանատու է շեմի սահմանման համար և պետք է համակարգի կողմից ապահովվի անվտանգության բարձր աստիճանի ստուգում մինչև համակարգ մուտք գործելը,

գ/ օգտագործողներ, որոնք պատասխանատու են վերադարձի հաստատման<sup>2</sup>, ստուգումների արդյունքների ուսումնասիրության, և այդ արդյունքների հիման վրա հաստատման/մերժման, ինչպես նաև ստանդարտ և հատուկ հաշվետվությունների գեներացման համար:

### 3.4) Վերլուծական մոդուլի իրականացում

ԱԱՀ ՎԱՀ-ի այս մոդուլն օգնում է ապահովել նախնական տվյալների ստեղծումը և կառավարումը, որն առնչվում է ռիսկային չափորոշիչների և շեմի սահմանման հետ: Այս մոդուլը բաղկացած է չորս հիմնական ենթամոդուլներից, այն է՝ Ռիսկային չափորոշիչների կառավարում, Բանաձևերի կազմում, Արդյունքների սահմանում և Շեմի սահմանում: Ստորև նկարագրվում է Վերլուծական մոդուլի յուրաքանչյուր ենթամոդուլի ֆունկցիոնալությունը:

3.4.1 Ռիսկային չափորոշիչների կառավարման ենթամոդուլը (*Չափորոշիչների ցանկ էջ*) հնարավորություն է տալիս դիտել արդեն սահմանված չափորոշիչները, սահմանել նոր ռիսկային չափորոշիչ, սահմանել ընտրված չափորոշիչի բանաձևը, ակտիվացնել/ապասկտիվացնել այն և նորացնել չափորոշիչի տեղեկությունները, համակարգի կողմից թույլտվություն ունենալու դեպքում: Կախված օգտագործողի տեսակից՝ համակարգն օգտագործողին կապահովի երկու տեսակի թույլտվությամբ, մասնավորապես արդեն պահպանված տվյալների դիտում կամ տեղեկությունների ստեղծում/նորացում: Համակարգն ապահովում է ռիսկային չափորոշիչների հետ կապված հետևյալ ֆունկցիոնալությունը.

- Ռիսկային չափորոշիչների դիտում. օգտագործողը հնարավորություն կունենա դիտել համակարգում արդեն պահպանված ռիսկային չափորոշիչները *Չափորոշիչների դիտում* բաժնի միջոցով: Այդ էջը հնարավորություն կտա, ըստ չափորոշիչի, դիտել կամ նորացնել չափորոշիչի տվյալները, ակտիվացնել/ապասկտիվացնել չափորոշիչը, ստեղծել, նորացնել կամ դիտել ընտրված չափորոշիչի բանաձևերը և ունենալ համապատասխան դրոշակ, եթե չափորոշիչն արդեն ունի իր համար սահմանված բանաձև:

Դիտման էջը ներառում է *Որոնում* բաժինը, որտեղ որոնման պարամետրերը հիմնականում դիտման աղյուսակում ներկայացված տվյալներն են, ինչպես օրինակ՝ չափորոշիչի անվանում, առավելագույն միավորների միջակայքը և մերժման կարգավիճակը: Որոնում ֆունկցիան հնարավորություն է տալիս զտել դիտման աղյուսակում պահպանված տեղեկատվությունը կամ սահմանել որոնման պարամետրեր իրենց նախնական տվյալներով:

- Չափորոշիչի սահմանում. օգտագործողը պետք է տեղեկություններ տրամադրի ռիսկային չափորոշիչի վերաբերյալ, այն է՝ անվանումը, առավելագույն միավորը և մերժման կարգավիճակը: Չափորոշիչի անվանման և առավելագույն միավորի դաշտերը պարտադիր են, սակայն մերժման

<sup>2</sup> Համակարգի ներդրման նախնական փուլում ենթադրվում է ունենալ մասամբ ավտոմատացված համակարգ, այն է՝ օգտագործողը պետք է հաստատի ԱԱՀ-ի վերադարձը կամ ուսումնասիրության ուղարկի հաշվարկը: Սույն մոտեցման կիրառելիությունը կապահովվի միայն համակարգի թեստավորման փուլում:

կարգավիճակը՝ ոչ: Ընտրելով *Պահպանել* կոճակը՝ նոր ստեղծված չափորոշիչը կհայտնվի դիտման աղյուսակում վերը նշված բոլոր պատկերակներով (icons), ապահովելով ֆունկցիոնալությունը, բացառությամբ դրոշ պատկերակից:

- Չափորոշիչի նորացում. կախված օգտագործողի տեսակից, համակարգը պետք է օգտագործողին հնարավորություն ընձեռի նորացնել չափորոշիչի մասին տեղեկատվությունը: Ընտրելով չափորոշիչի նորացնել կոճակը, չափորոշիչի մասին տեղեկությունները կհայտնվեն էջի *Չափորոշիչի սահմանում* բաժնում: Օգտագործողը հնարավորություն կունենա փոփոխել միայն առավելագույն միավորի արժեքը և մերժման կարգավիճակը, իսկ այնուհետ պահպանի տեղեկատվությունը: Չափորոշիչի նորացված տվյալները պետք է ավտոմատ կերպով հայտնվեն չափորոշիչի դիտման աղյուսակում: Չափորոշիչի մասին տեղեկությունները կարելի է խմբագրել, եթե այն նախկինում չի կիրառվել համակարգում, այն է՝ չափորոշիչը երբևէ չի ակտիվացվել:
- Ակտիվացնել/ապասկտիվացնել չափորոշիչը. չափորոշիչը հասանելի է գնահատման ընթացքում, եթե այն ակտիվացված է: Չափորոշիչը կարելի է ակտիվացնել այն ժամանակ երբ օգտագործողը սահմանել է բանաձև այդ չափորոշիչի համար: Չափորոշիչի ստեղծման նախնական փուլում, եթե դրա համար գոյություն չունի սահմանված բանաձև, այն չի կարող ակտիվացվել: Ապասկտիվացման գործընթացը պետք է իրականացնել համակարգում չափորոշիչներն անհասանելի դարձնելու համար, այսպիսով հաշվարկների գնահատման գործընթացում պետք է դիտարկել միայն ակտիվացված չափորոշիչները:
- Չափորոշիչի տվյալների կամայական փոփոխության ժամանակ, համակարգը պետք է պահպանի չափորոշիչի հին և նոր տվյալները բազայում, ինչպես նաև օգտագործողի անվանումը, ով կատարել է փոփոխությունը, և փոփոխման ժամանակը: Այսպիսով չափորոշիչի ամբողջական պատմական տվյալները պետք է պահպանված լինեն բազայում և հասանելի լինեն համակարգի կառավարիչներին ըստ անհրաժեշտության: Այս ֆունկցիան կիրառելի է ինչպես չափորոշիչի տվյալների և կարգավիճակի փոփոխման ժամանակ, այդպես էլ երբ փոփոխության է ենթարկվում չափորոշիչի բանաձևը կամ բանաձևի արդյունքը:
- Ստեղծել/Նորացնել/Դիտել բանաձևը. սա կապ է հանդիսանում համակարգի Բանաձևերի կազմման մոդուլի հետ: Կախված օգտագործողի իրավասություններից, նա պետք է հնարավորություն ունենա ստեղծել, նորացնել կամ դիտել բանաձևը:

Ստորև տրվում են *Չափորոշիչների ցանկ* էջի դաշտերի սահմանումները.

Աղյուսակ 1 Չափորոշիչների ցանկ էջ

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
<b>Որոնման բաժին</b>				
Չափորոշիչի անվանումը	Dropdown	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է չափորոշիչի անվանումը: Ցուցակը ներառում է բոլոր չափորոշիչների անվանումները, որոնք պահպանված են համակարգում և <<Բոլորը>> արժեքը:
Առավելագույն միավորների միջակայքը	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է առավելագույն միավորների միջակայքը:
Ավտոմատ մերժում	Dropdown	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է չափորոշիչի մերժման կարգավիճակը: Ցուցակի արժեքներն են՝ - Բոլորը - Այո - Ոչ
Ակտիվացման կարգավիճակ	Dropdown	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է չափորոշիչի ակտիվացման կարգավիճակը: Ցուցակի արժեքներն են՝ - Բոլորը - Ակտիվ - Ոչ ակտիվ
Որոնում	Button			Կատարել որոնում աղյուսակում ելնելով սահմանված որոնման պարամետրերի արժեքներից:
Նոր որոնում	Button			Սահմանել որոնման պարամետրերը նախնական արժեքներով:
<b>Աղյուսակ</b>				
#	Column			Ցուցադրում է հերթական համարը:
Չափորոշիչի անվանում	Column			Ցուցադրում է չափորոշիչի անվանումը:
Առավելագույն միավոր	Column			Ցուցադրում է չափորոշիչի առավելագույն միավորի արժեքը:
Ավտոմատ մերժում	Column			Ցուցադրում է չափորոշիչի մերժման կարգավիճակը:
Ակտիվացման կարգավիճակ	Column			Ցուցադրում է չափորոշիչի ակտիվացման կարգավիճակը:
Խմբագրել չափորոշիչը	Button			Էջի Չափորոշիչի սահմանում բաժնում, լրացնել դաշտերի արժեքները ընտրված չափորոշիչի տվյալներով:
Ակտիվացնել / ապասկտիվացնել	Button			Փոխել չափորոշիչի կարգավիճակը:
Բանաձևի ստեղծում / խմբագրում / դիտում	Button			Բացել Չափորոշիչի բանաձևի ստեղծում էջը: Խմբագրման կամ դիտման ժամանակ, էջը լրացնել նախապես սահմանված տվյալներով:
Դրոշակ	Icon			Եթե առկա է, ապա այդ չափորոշիչն ունի սահմանված բանաձև:
<b>Չափորոշիչի սահմանում</b>				
Չափորոշիչի անվանում	Text box	Պարտադիր		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող նիշերի քանակը չպետք է գերազանցի 255-ը: Դաշտի արժեքը համակարգում պետք է լինի ունիկալ:
Առավելագույն միավոր	Text box	Պարտադիր		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն 0-999 միջակայքում :
Ավտոմատ մերժում	Check Box		Ընտրված չէ	Նշում է չափորոշիչի մերժման կարգավիճակը:



Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Պահպանել	Button			Չափորոշիչը պահպանել համակարգում :

3.4.2 Համակարգի Բանաձևերի կազմման ենթամոդուլն օգտագործողին հնարավորություն է տալիս սահմանել բանաձևը ընտրված ռիսկային չափորոշիչի համար: Չափորոշիչի էջից ընտրելով ռիսկային չափորոշիչը՝ համակարգը պետք է բացի *Չափորոշիչի բանաձևի ստեղծում* էջը: *Չափորոշիչի բանաձևի ստեղծման էջի Բանաձևի ստեղծում* բաժնի ֆուկցիոնալությունը նկարագրված է ստորև.

- Համակարգը պետք է ցուցադրի ընտրված չափորոշիչի անվանումը էջի վրա, որի համար պետք է սահմանել բանաձևը:
- *Փաստաթղթերի ծառ* մասը պետք է ցույց տա ԱԱՀ-ի հաշվարկը (այսուհետ՝ փաստաթուղթ) տողերով և սահմանված ծրագրային օբյեկտները իրենց համապատասխան ենթաօբյեկտներով: Փաստաթղթի անվանումը կսահմանվի հետևյալ կերպ՝ փաստաթղթի անվանումը = փաստաթղթի կոդ + փաստաթղթի անվանում: Փաստաթղթի տողի անվանումը կսահմանվի հետևյալ ձևով. տողի անվանում = տողի կոդ + տողի անվանում: Ավելացնելու համար (փաստաթուղթ → տող) կամ (օբյեկտ → ենթաօբյեկտ) զույգը էջի Բանաձևի դիտման բաժին, զույգը պետք է ընտրել և սեղմել *Ավելացնել տողը* կոճակը:
- Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ստեղծել բանաձևեր՝ կիրառելով մաթեմատիկական և տրամաբանական օպերատորներ, ինչպես նաև ֆունկցիաներ: Համակարգում այդ օպերատորները պետք է ցուցադրվեն կոճակների ձևով:
- Ընտրելով (փաստաթուղթ → տող) կամ (օբյեկտ → ենթաօբյեկտ) զույգերը *Փաստաթղթերի ծառ* բաժնից և օգտագործելով նախօրոք սահմանված մաթեմատիկական օպերատորները, համակարգը պետք է հնարավորություն ապահովի ստեղծել մաթեմատիկական արտահայտություններ Բանաձևի դիտման բաժնում:

Ստորև տրվում են դաշտերի սահմանումները *Չափորոշիչի բանաձևի ստեղծման էջի Բանաձևի ստեղծում* բաժնի համար:

**Աղյուսակ 2 Չափորոշիչի բանաձևի ստեղծում էջ Բանաձևի ստեղծում բաժին**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Չափորոշիչի անվանում	Text box; Disabled			Ցուցադրում է ընտրված չափորոշիչի անվանումը:
Փաստաթղթերի ծառ	Tree			Ցուցադրում է փաստաթուղթն իր տողերով, ինչպես նաև ծրագրային օբյեկտները, իրենց ենթաօբյեկտներով:
Ավելացնել տողը	Button			Փաստաթղթերի ծառից ընտրված տողը ավելացնել Բանաձևի դիտման բաժին:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Բանաձևի դիտման բաժին	Text box; multi-line			Ցուցադրում է բանաձևի սահմանումը ընտրված ծառի տողերի և մաթեմատիկական օպերատորների միջոցով:
Մաթեմատիկական օպերատորներ	Buttons			Մաթեմատիկական օպերատորների ցուցակը հետևյալն է. - գումարում - հանում - բազմապատկում - բաժանում - տոկոս - փակագծեր - հավասարման նշան - մեծի / փոքրի նշան - բուլեան օպերատորներ (And/Or) - միջին արժեքի հաշվարկման ֆունկցիա (AVR)
Հաջորդը	Button			Անցնել <i>Բանաձևի կիրառման արդյունքներ</i> էջը: Պահպանել սահմանված բանաձևը:

3.4.3 Համակարգում Արդյունքների սահմանման ենթամոդուլը պետք է հնարավորություն ընձեռի օգտագործողին նշելու արդյունքի տեսակը և սահմանված բանաձևի արժեքները: Արդյունքները պետք է ցուցադրվեն երեք տեսակով՝ բանաձևի եզակի արժեք, բանաձևի արժեքների միջակայք և արժեքների բազմակի տեսակներ: Ստորև տրվում է *Չափորոշիչի բանաձևի ստեղծման էջի Բանաձևի կիրառման արդյունքներ* բաժնի հիմնական ֆունկցիոնալությունը.

- Համակարգը պետք է ցուցադրի չափորոշիչի անվանումը և ընտրված չափորոշիչի առավելագույն միավորի արժեքը, որոնք սահմանված էին *Չափորոշիչների գանկ* էջում:
- Համակարգը պետք է ստուգի *Միավոր* դաշտերի արժեքները, երբ օգտագործողի կողմից մուտքագրված միավորները չպետք է գերազանցեն չափորոշիչի առավելագույն միավորը և չպետք է լինեն 0-ից ցածր:
- *Բանաձևի եզակի արժեք* ենթաբաժնում *Այո* և *Ոչ* դաշտերը դիտարկվում են որպես բանաձևի արդյունքներ և *Միավոր* դաշտը պետք է սահմանի չափորոշիչի արժեքը համապատասխան արդյունքի համար: Որպես նախնական արժեքներ, *Այո*-ի համար *Միավոր* դաշտը պետք է սահմանել չափորոշիչի առավելագույն միավորով, *Ոչ*-ի համար *Միավոր* դաշտը պետք է սահմանել 0:
- *Էջի Բանաձևի արժեքների միջակայք* ենթաբաժնում համակարգը պետք է հնարավորություն ապահովի սահմանել արդյունքի տեսակը, հատկապես արդյունքը կարող է արտահայտվել որպես տոկոս, քանակ կամ գումար: Օգտագործողը պետք է հնարավորություն ունենա ավելացնել այնքան արժեքների միջակայք որքան պահանջում է սահմանված բանաձևը և ջնջել դրանք: *Սկիզբ* և *Վերջ* դաշտերը պետք է սահմանեն բանաձևի արդյունքի

միջակայքերը, և *Միավոր* դաշտը համապատասխան արդյունքի միջակայքի համար պետք է սահմանի չափորոշչի միավորը:

- Էջի *Արժեքների բազմակի տեսակներ* ենթաբաժնի միջոցով օգտագործողին հնարավորություն է տրվում սահմանել չափորոշչի միավորներ, որոնց համար բանաձևերի արդյունքները պետք է ցուցադրվեն որպես քանակի և տեսակի զույգ: Քանակի դաշտը պետք է ցուցադրի բանաձևի քանակական արդյունքը, իսկ տեսակի դաշտը պետք է սահմանի բանաձևի արդյունքի տեսակը, որի համար քանակն ապահովված է: Օգտագործողին պետք է հնարավորություն ընձեռել սահմանելու բանաձևի բազմակի արժեքներ *Ավելացնել տող* կոճակի միջոցով:

Ստորև տրվում են դաշտերի սահմանումները *Չափորոշչի բանաձևի ստեղծում* էջի *Բանաձևի կիրառման արդյունքներ* բաժնի համար:

**Աղյուսակ 3 Չափորոշչի բանաձևի ստեղծում էջ Բանաձևի կիրառման արդյունքներ բաժին**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Չափորոշչի անվանումը	Text box; Disabled			Ցուցադրում է ընտրված չափորոշչի անվանումը:
Չափորոշչի առավելագույն միավորը	Text box; Disabled			Ցուցադրում է ընտրված չափորոշչի առավելագույն միավորը:
Բանաձևի եզակի արժեք	Check Box		Ընտրված է	Ընտրում է բանաձևի արդյունքի տեսակը:
Արժեք <i>Այո</i>	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է <i>Եզակի արժեք</i> -ը	Չափորոշչի առավելագույն միավորը	Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր 0-999 միջակայքում:
Արժեք <i>Ոչ</i>	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է <i>Եզակի արժեք</i> -ը	“0”	Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր 0-999 միջակայքում:
Բանաձևի արժեքների միջակայք	Check Box		Ընտրված չէ	Ընտրում է բանաձևի արդյունքի տեսակը:
Սկիզբ	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է <i>Արժեքների միջակայք</i> -ը		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր: <i>Սկիզբ</i> դաշտի արժեքը պետք է լինի ավելի փոքր <i>Վերջ</i> դաշտի արժեքից:
Վերջ	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է <i>Արժեքների միջակայք</i> -ը		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր: <i>Վերջ</i> դաշտի արժեքը պետք է մեծ լինի <i>Սկիզբ</i> դաշտի արժեքից:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Միավոր	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է Արժեքների միջաակայք		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր 0-999 միջակայքում:
Ջնջել	Button			Ջնջել տողը <i>Բանաձևի արժեքների միջակայք</i> բաժնից:
Ավելացնել տող	Button			Ավելացնել նոր տող <i>Բանաձևի արժեքների միջակայք</i> բաժնում:
Արժեքների բազմակի տեսակներ	Check Box		Ընտրված չէ	Ընտրում է բանաձևի արդյունքի տեսակը:
Քանակ	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է Արժեքների բազմակի տեսակներ		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ դրական թվեր:
Տեսակ	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է Արժեքների բազմակի տեսակներ		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող նիշերի քանակը չպետք է գերազանցի 255-ը:
Միավոր	Text Box	Պարտադիր, եթե ընտրված է Արժեքների բազմակի տեսակներ		Մուտքագրման դաշտ: Մուտքագրվող արժեքները պետք է լինեն ամբողջ թվեր 0-999 միջակայքում:
Ջնջել	Button			Ջնջել տողը <i>Արժեքների բազմակի տեսակներ</i> բաժնից:
Ավելացնել տող	Button			Ավելացնել նոր տող <i>Արժեքների բազմակի տեսակներ</i> բաժնում:
Պահպանել	Button			Տվյալները պահպանել համակարգում:

3.4.4 Համակարգում Շեմի սահմանման ենթամոդուլը պետք է օգտագործողին հնարավորություն ընձեռի սահմանելու շեմի արժեքը, որը կիրառվելու է գնահատված հաշվարկների դասակարգման ժամանակ: Համակարգի այս մոդուլն պետք է ունենա բարձր մակարդակի անվտանգության ապահովում: Վերը նշված անվտանգության պահանջները բավարարելու նպատակով արդեն համակարգ մուտք գործաց օգտագործողը պետք է տրամադրի լրացուցիչ մուտքի տեղեկատվություն, որը կօգնի վերհսկել օգտագործողի հասանելիության մակարդակը այդ մոդուլի համար: Վերջինս պետք է պատասխանատու լինի համակարգում շեմի արժեքի սահմանման /վերասահմանման համար: Ստորև տրվում է *Շեմի սահմանում* էջի հիմնական ֆունկցիոնալությունը.

- Համակարգը պետք է հնարավորություն ապահովի սահմանել կամ վերասահմանել համակարգում կիրառվող շեմի արժեքը: Շեմի արժեքը հանդիսանում է գնահատված հաշվարկների միավորների վրա հիմնված դասակարգման շեմը: Ելնելով շեմի արժեքից համակարգը կսահմանի հաշվարկի կարգավիճակը, ինչպես օրինակ՝ դասակարգված ենթակա ավտոմատ վերադարձի կամ ենթակա ստուգման:
- Համակարգը պետք է պահի շեմի վերաբերյալ պատմությունը, հատկապես, երբ օգտագործողը համակարգում վերասահմանում է շեմի արժեքը, համակարգը պետք է պահի ամբողջ տեղեկատվությունը, որն առնչվում է շեմի սահմանման հետ: Պատմական ֆայլը պետք է ներառի օգտագործողի տվյալները, նրա կողմից համակարգ մուտք գործելու ամսաթիվը և ժամը, ինչպես նաև նոր և հին շեմերի արժեքները:

Ստորև տրվում են *Շեմի սահմանում* էջի դաշտերի սահմանումները.

**Աղյուսակ 4 Շեմի սահմանում էջ**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Շեմի արժեքը	Text Box	Պարտադիր		Սահմանում է շեմի արժեքը:
Պահպանել	Button			Համակարգում պահպանել սահմանված շեմի արժեքը: Պահպանել մուտքի տեղեկատվությունը, մասնավորապես օգտագործողի տվյալները, ամսաթիվը և ժամը, թե երբ է օգտագործողը մուտք գործել համակարգ, ինչպես նաև շեմի նոր և հին արժեքները:

**3.5) Հաշվարկի գնահատման և դասակարգման մոդուլ**

Հաշվարկի գնահատման և դասակարգման մոդուլն օգտագործողին հնարավորություն է տալիս մեկ տեղում ունենալ գնահատված և դասակարգված հաշվարկներ: Այս մոդուլի իրականացումը պետք է հիմնված լինի նախապես սահմանված պայմանի վրա, այն է՝ համակարգը պետք է ավտոմատ ձևով սկսի աշխատել յուրաքանչյուր ամսվա 20-ին: Պետք է իրականացնել հետևյալ հաջորդական քայլերը բավարարելու վերը նշված պահանջները.

1. Յուրաքանչյուր ամսվա 20-ին համակարգը պետք է ավտոմատ կերպով ԱԱՀ ՎԱՀ-ի տվյալների բազա վերբեռնի ԱԱՀ-ի վերադարձի բոլոր այն հաշվարկները, որոնք առկա են Հարկատու 3 համակարգում,
2. Համակարգը պետք է գնահատի յուրաքանչյուր հաշվարկ նախապես սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա,
3. Սխալների դեպքում համակարգը պետք է գեներացնի գնահատման արդյունքները,
4. Գնահատված հաշվարկները պետք է դասակարգվեն ըստ համակարգում նախապես սահմանված շեմի:

Որպես վերջնական արդյունք համակարգը պետք է գեներացնի երկու տեսակի ցանկեր՝ հաշվարկներ, որոնք ենթակա են ավտոմատ վերադարձման և հաշվարկներ, որոնք ենթակա են ստուգման: Հետևաբար օգտագործողը, որը մուտք ունի *Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի* էջին, պետք է ունենա հաշվարկների ցանկ իրենց գնահատված միավորներով և կարգավիճակներով՝ որոշելով, թե արդյոք հաշվարկը դասակարգված է ենթակա ավտոմատ վերադարձի կամ ստուգման:

Հաշվարկի գնահատման և դասակարգման մոդուլը բաղկացած է երկու հիմնական ենթամոդուլներից, մասնավորապես հաշվարկների գնահատում և դասակարգում *Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի* էջ և սխալների դեպքում գնահատման արդյունքների դիտում *Գնահատման արդյունքը* էջ:

3.5.1 Ստորև տրվում է Հաշվարկի գնահատման և դասակարգման մոդուլի հիմնական ֆունկցիոնալությունը.

- Համակարգը պետք է վերբեռնի Հարկատու 3 համակարգում առկա բոլոր ԱԱՀ-ի վերադարձի հաշվարկները: Հաշվարկները պետք է պահպանվեն ԱԱՀ ՎԱՀ-ի տվյալների բազայում:
- Համակարգը պետք է գնահատի յուրաքանչյուր հաշվարկ՝ ելնելով նախապես սահմանված ռիսկային չափորոշիչներից: Հաշվարկների գնահատման վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը պետք է պահպանել տվյալների բազայում, մասնավորապես գնահատված հաշվարկների քանակը և արդյոք սխալներ եղել են գնահատման ընթացքում: Սխալի դեպքում, դրա մասին տեղեկատվությունը հաշվարկի տվյալների և չափորոշիչների անվանումների հետ միասին, որոնք էլ սխալի պատճառն են, պետք է նույնպես պահպանել տվյալների բազայում:
- Այն դեպքում, երբ հաշվարկը պատշաճ ձևով չի գնահատվել սխալների պատճառով, *Միավոր* դաշտը պետք է ներառի սխալի նշան չգնահատված հաշվարկը ցույց տալու համար: Սխալի նշանը պետք է կապ հանդիսանա *Գնահատման արդյունքը* էջի հետ: Սխալի դեպքում նշումների վանդակը (աղյուսակի վերջին սյունակում) հաշվարկն ընտրելու համար պետք է ապասկտիվացնել կանխելու օգտագործողի կողմից չգնահատված հաշվարկի կիրառումը համակարգում:
- *Միավոր* դաշտը պետք է ցուցադրի հաշվարկի ընդհանուր միավորը, որն ստացվել է գնահատման ընթացքում: Հաշվարկի միավորը հաշվարկվում է

գնահատման արդյունքում ստացած ռիսկային բոլոր չափորոշիչների միավորների հանրագումարով:

- Ելնելով նախապես սահմանված շեմի արժեքից՝ համակարգն ավտոմատ կերպով պետք է դասակարգի հաշվարկները, այն է՝ հաշվարկներ ենթակա ավտոմատ վերադարձման կամ ենթակա ստուգման: Համակարգը պետք է համեմատություն կատարի յուրաքանչյուր հաշվարկի միավորի և շեմի արժեքի միջև: Եթե հաշվարկի միավորը հավասար կամ պակաս է շեմի արժեքից, ապա հաշվարկը պետք է դասակարգել ենթակա ավտոմատ վերադարձման, և *Ավտոմատ հետ վերադարձի ենթակա է* սյունակում պետք է ներառել *Այո* արժեքը: Եթե հաշվարկի միավորը գերազանցում է շեմի արժեքը, համակարգը պետք է հաշվարկը դասակարգի որպես ստուգման ենթակա և համապատասխան սյունակը պետք է պարունակի *Ոչ* արժեքը:
- *Ավտոմատ մերժում* սյունակը ցուցադրում է հաշվարկի կարգավիճակը, որը պարունակում է *Այո* կամ *Ոչ* արժեքը: Համակարգը պետք է ստուգի ավտոմատ մերժման կարգավիճակը գնահատված հաշվարկի ռիսկային բոլոր չափորոշիչների համար: Գնահատման գործընթացում եթե ռիսկային չափորոշիչներից ոչ մեկ չի ստանում Ավտոմատ մերժման կարգավիճակ *Այո* արդյունքով, ապա *Ավտոմատ մերժում* սյունակը սահմանվում է *Ոչ* արժեքով: Այն դեպքում երբ գնահատման գործընթացում չափորոշիչներից որևէ մեկը ստանում է Ավտոմատ մերժման կարգավիճակ *Այո* արդյունքով, ապա *Ավտոմատ մերժում* սյունակը սահմանվում է *Այո* արժեքով:
- Եթե *Ավտոմատ մերժում* սյունակը պարունակում է *Այո* արժեքը, ապա հաշվարկը պետք է ավտոմատ կերպով դասակարգվի, որպես ստուգման ենթակա, անկախ գնահատված միավորի և շեմի արժեքի համեմատությունից:
- *Պարտավորությունների առկայություն* սյունակը ընտրված հաշվարկի համար պետք է կապ ապահովի *Պարտավորությունների ցանկ* էջի հետ: Հետևյալ սյունակների տվյալները արտացոլում են *Պարտավորությունների ցանկ* էջի տվյալները.
  - հաշվանցման ենթակա գումար,
  - վերջնական գումար հետագա մարումների համար, և
  - վերադարձման ենթակա վերջնական գումար:
- Հաշվարկն ընտրելիս օգտագործողը պետք է կարողանա հաստատի ԱԱՀ-ի վերադարձը կամ ուղարկի ուսումնասիրության՝ սեղմելով համապատասխան կոճակը:
- Եթե հաշվարկը հաստատվում է որպես ԱԱՀ-ի ավտոմատ վերադարձ, հաշվարկը պետք է պահպանվի համակարգում որպես հաստատված ԱԱՀ-ի հաշվարկ: Դրանից հետո համակարգը պետք է վերադարձի հաստատման մասին ծանուցի Գանձապետարանի հետ կապերի համար պատասխանատու վարչությանը: Միաժամանակ համակարգը պետք է ծանուցում ուղարկի հարկ վճարողների հետ կապերի համար պատասխանատու վարչությանը: Եվ վերջում համակարգը պետք է բացի *Հաստատված ԱԱՀ հաշվարկներ* էջը հաստատված հաշվարկների ցանկով:

- Եթե հաշվարկն ուղարկվում է ուսումնասիրության, ապա հաշվարկը պետք է պահպանվի համակարգում *ուսումնասիրությամբ* նշումով: Համակարգը պետք է ծանուցում ուղարկի ստուգումների վարչությանը՝ կից ուղարկելով ընտրված հաշվարկների ցանկը ենթակա ուսումնասիրության:

Ստորև տրվում են *Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի* էջի դաշտերի սահմանումները.

**Աղյուսակ 5 Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի էջ**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
<b>Որոնման բաժին</b>				
Փաստ. #	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է փաստաթղթի համարը:
ՀՎՀՀ	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է ՀՎՀՀ-ն:
ԱԱՀ ՎՀՀ	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է ԱԱՀ ՎՀՀ-ն:
Կազմ. անվանումը	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է կազմակերպության անվանումը:
Գտնվելու վայր	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է գտնվելու վայրը:
Ներկայացման ամսաթիվ	Calendar Box	Ոչ պարտադիր	Ընթացիկ ամսաթիվ	Սահմանում է հաշվարկի ներկայացման ամսաթվի միջակայքը:
Ժամանակաշրջան – ամիս և եռամսյակ	Dropdown	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է տարվա բոլոր եռամսյակների և ամիսների ցանկը, ինչպես նաև “Բոլորը” արժեքը. <b>Բոլորը</b> <b>Եռամսյակներ</b> – I եռամսյակ – II եռամսյակ – III եռամսյակ – IV եռամսյակ <b>Ամիսներ</b> – հունվար – փետրվար – մարտ... – – դեկտեմբեր
Ժամանակաշրջան – Տարի	Dropdown	Ոչ պարտադիր	Ընթացիկ տարի	Սահմանում է տարիների ցանկը 2000-ից մինչև 2020-ը:
Պահանջի գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է պահանջի գումարը:
Գումար հետագա մարումների համար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է հետագա պարտավորությունները մարելու ենթակա գումարը:
Վերադարձնել բանկային հաշվին	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է բանկային հաշիվ փոխանցվող վերադարձման գումարը:
Միավորների միջակայք	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է միջակայք գնահատված հաշվարկների միավորների համար:



Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Ավտոմատ վերադարձի ենթակա է	Dropdown box	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է հաշվարկի կարգավիճակը՝ նշված է, որպես ավտոմատ վերադարձման ենթակա կամ ոչ: Թվարկված արժեքները հետևյալն են. – Բոլորը – Այո – Ոչ
Ավտոմատ մերժում	Dropdown box	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է հաշվարկի ավտոմատ մերժման կարգավիճակը: Թվարկվում են հետևյալ արժեքները. – Բոլորը – Այո – Ոչ
Հաշվանցման ենթակա գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է հաշվանցման ենթակա գումարը:
Վերջնական գումար հետագա մարումների համար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է հետագա պարտավորությունների մարման համար վերջնական գումարը:
Վերադարձման ենթակա վերջնական գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է վերադարձման ենթակա վերջնական գումարը:
Գտնել	Button			Կատարել որոնում աղյուսակում էլնելով սահմանված որոնման պարամետրերի արժեքներից:
Նոր որոնում	Button			Սահմանել որոնման պարամետրերը նախնական արժեքներով:
<b>Աղյուսակ</b>				
#	Column			Ցուցադրում է հերթական համարը:
Փաստաթղթի #	Column			Ցուցադրում է փաստաթղթի համարը հաշվարկից:
ՀՎՀՀ	Column			Ցուցադրում է ՀՎՀՀ-ն հաշվարկից:
ԱԱՀ ՎՀՀ	Column			Ցուցադրում է ԱԱՀ ՎՀՀ-ն հաշվարկից:
Կազմակերպության անվանում	Column			Ցուցադրում է կազմակերպության անվանումը հաշվարկից:
Գտնվելու վայր	Column			Ցուցադրում է կազմակերպության գտնվելու վայրը հաշվարկից:
Ներկայացման ամսաթիվ	Column			Ցուցադրում է հաշվարկի ներկայացման ամսաթիվը հաշվարկից:
Ժամանակաշրջան	Column			Ցուցադրում է հաշվարկի ժամանակաշրջանը հաշվարկից:
Պահանջի գումար	Column			Ցուցադրում է պահանջի գումարը հաշվարկից:
Գումար հետագա մարումների համար	Column			Ցուցադրում է առաջիկա պարտավորությունների մարման համար գումարը հաշվարկից:
Վերադարձնել բանկային հաշվին	Column			Ցուցադրում է բանկային հաշվին վերադարձման գումարը հաշվարկից:
Միավոր	Column			Ցուցադրում է հաշվարկի միավորի արժեքը՝ էլնելով գնահատման արդյունքներից: Եթե սյունակը ներառում է սխալի նշան, ապա այն պետք է կապ ապահովի <i>Գնահատման արդյունքը</i> էջի հետ:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Ավտոմատ հետ վերադարձի ենթակա է	Column			Ցուցադրում է հաշվարկի դասակարգման կարգավիճակը, արդյոք այն ենթակա է ավտոմատ վերադարձման: Սյունակի արդյունքների բազմությունն է {Այո, Ոչ}:
Ավտոմատ մերժում	Column			Ցուցադրում է հաշվարկի ավտոմատ մերժման կարգավիճակը՝ ելնելով գնահատման արդյունքներից: Սյունակի արդյունքների բազմությունն է {Այո, Ոչ}:
Պարտավորությունների առկայություն	Column			Ցուցադրում է կապը <i>Պարտավորությունների ցանկ</i> էջի հետ:
Հաշվանցման ենթակա գումար	Column			Ցուցադրում է հաշվանցման ենթակա գումարը, որը ստացվում է <i>Պարտավորությունների ցանկ</i> էջից:
Վերջնական գումար հետագա մարումների համար	Column			Ցուցադրում է վերջնական գումարը հետագա մարումների համար, որը ստացվում է <i>Պարտավորությունների ցանկ</i> էջից:
Վերադարձման ենթակա վերջնական գումար	Column			Ցուցադրում է վերադարձման ենթակա վերջնական գումարը, որը ստացվում է <i>Պարտավորությունների ցանկ</i> էջից:
	Column; Chekbox			Ցուցադրում է հաշվարկի ընտրանքը, որը օգտագործողի կողմից նշվելուց հետո պատրաստ կլինի հետագա գործողությունների իրականացման համար:
Տպել	Button			Տպել էջի բովանդակությունը:
Հաստատել հետ վերադարձ	Button			Կախված օգտագործողի ընտրությունից՝ նշված հաշվարկները պետք է պահպանվեն համակարգում որպես հաստատված ԱԱՀ-ի հաշվարկներ: Բացել <i>Հաստատված ԱԱՀ հաշվարկներ</i> էջը նշված հաշվարկներով:
Ուղարկել ուսումնասիրության	Button			Կախված օգտագործողի ընտրությունից՝ նշված հաշվարկները պետք է պահպանվեն համակարգում որպես հաշվարկներ, որոնք ուղարկված են ուսումնասիրության: Բացել <i>Ստուգման գործընթաց</i> և <i>արդյունք</i> էջը նշված հաշվարկներով:

3.5.2 *Գնահատման արդյունքը* էջը պետք է կապված լինի *Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի* էջի հետ, եթե հաշվարկի գնահատման ընթացքում որևէ սխալ է առաջանում: Այդ դեպքում *Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի* էջի Միավոր սյունակը պետք է ներառի սխալի նշան, որը կապ կհանդիսանա *Գնահատման արդյունքը* էջի հետ: Ստորև տրվում է համակարգի Գնահատման արդյունքներ ենթամոդուլի հիմնական ֆունկցիոնալությունը.

- *Գնահատման արդյունքը* էջը պետք է ներառի հաշվարկի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, գնահատման ընդհանուր արդյունքներ և գնահատման վերաբերյալ մանրամասն տեղեկությունների բաժին:

- Հաշվարկի բաժնում ընդհանուր տեղեկությունները հիմնականում ներառում են հաշվարկի համարը, հարկ վճարողի ՀՎՀՀ-ն, կազմակերպության անվանումը և այլնի մասին տվյալներ:
- Գնահատման ընդհանուր արդյունքներ բաժինը պետք է ցուցադրի հետևյալ տեղեկությունները.
  - չափորոշիչների ընդհանուր քանակ,
  - գնահատված չափորոշիչների քանակ,
  - չգնահատված չափորոշիչների քանակ:

Չափորոշիչների ընդհանուր քանակը պետք է ցուցադրի համակարգում ակտիվ չափորոշիչների ընդհանուր քանակը: Գնահատված չափորոշիչների քանակը պետք է ցուցադրի պատշաճ ձևով գնահատված չափորոշիչների քանակը: Չգնահատված չափորոշիչների քանակը պետք է ցուցադրի այն չափորոշիչների քանակը, որոնց գնահատման ընթացքում սխալ(ներ) են տեղի ունեցել:
- Գնահատման վերաբերյալ մանրամասն տեղեկությունների բաժինը պետք է ցուցադրի հետևյալը.
  - չգնահատված չափորոշիչների ցուցակը,
  - տեխնիկական խնդիրների ցուցակը, որոնք առաջ են եկել չափորոշիչների գնահատման ընթացքում:

Այդ բաժինը պետք է ներկայացնի անհրաժեշտ անբողջ տեղեկատվությունը SS վարչության կողմից խնդիրը լուծելու համար:
- Ինչպես արդեն նշվել է նախօրոք, գնահատման գործընթացին վերաբերվող ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես յուրաքանչյուր չափորոշիչի համար ճշգրիտ ձևով գնահատված հաշվարկի տեղեկատվությունը, և սխալների մասին տեղեկությունները պետք է պահպանվեն տվյալների բազայում: Սա հնարավորություն կտա որպեսզի SS վարչությունը հետևի բոլոր գնահատումներին և լուծի ծագած խնդիրներն ըստ անհրաժեշտության:

Ստորև տրվում են դաշտերի սահմանումները *Գնահատման արդյունքը* էջի համար.

**Աղյուսակ 6 Գնահատման արդյունքը էջ**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Փաստ. #	Text box; Disabled			Ցուցադրում է փաստաթղթի համարը հաշվարկից:
ՀՎՀՀ	Text box; Disabled			Ցուցադրում է ՀՎՀՀ-ն հաշվարկից:
ԱԱՀ ՎՀՀ	Text box; Disabled			Ցուցադրում է ԱԱՀ ՎՀՀ-ն հաշվարկից:
Կազմ. անվանում	Text box; Disabled			Ցուցադրում է կազմակերպության անվանումը հաշվարկից:
Գտնվելու վայր	Text box; Disabled			Ցուցադրում է գտնվելու վայրը հաշվարկից:
Ներկայացման ամսաթիվ	Calendar Box; Disabled			Ցուցադրում է ներկայացման ամսաթիվը հաշվարկից:
Ժամանակաշրջան	Text box; Disabled			Ցուցադրում է ժամանակաշրջանը հաշվարկից:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Պահանջի գումար	Text box; Disabled			Ցուցադրում է պահանջի գումարը հաշվարկից:
Գումար հետագա մարումների համար	Text box; Disabled			Ցուցադրում է հետագա պարտավորությունների մարման համար գումարը հաշվարկից:
Վերադարձնել բանկային հաշվին	Text box; Disabled			Ցուցադրում է բանկային հաշվին վերադարձվող գումարը հաշվարկից:
Ընդհանուր չափորոշիչների քանակ	Text box; Disabled			Ցուցադրում է չափորոշիչների ընդհանուր քանակը, որոնք ներկայումս ակտիվ են համակարգում:
Գնահատված չափորոշիչների քանակ	Text box; Disabled			Ցուցադրում է պատշաճ ձևով գնահատված չափորոշիչների քանակը:
Չգնահատված չափորոշիչների քանակ	Text box; Disabled			Ցուցադրում է չգնահատված չափորոշիչների քանակը, հատկապես սխալներ պարունակող չափորոշիչների քանակը:
<i>Արդյունքների բաժին</i>	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է գնահատման գործընթացի արդյունքները:
Հետ դեպի նաղորդ էջ	Button			Հետ դեպի <i>Գնահատված հաշվարկներ՝ դասակարգված ըստ շեմի էջը</i> :
Տպել	Button			Տպել էջի բովանդակությունը:

### 3.6) Վերադարձի հաստատման մոդուլ

Վերադարձի հաստատման մոդուլն օգտագործողին հնարավորություն է տալիս դիտել պարտավորությունների ցուցակը, հաստատել վերադարձները և ծանուցում ուղարկել Գանձապետարան և հարկ վճարողին: Վերը նշված պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական քայլերը.

1. Երբ գեներացվում է գնահատված և դասակարգված հաշվարկների ցանկը, օգտագործողը պետք է կարողանա դիտել ընտրված հաշվարկի համար պարտավորությունների ցանկը,
2. Այս օգտագործողը պետք է հաստատի ավտոմատ վերադարձի համար նշված հաշվարկները,
3. Հաստատումից հետո տվյալները պետք է պահպանվեն տվյալների բազայում, որպես հաստատված ԱԱՀ հաշվարկներ և պետք է հասանելի լինեն օգտագործողին դիտման նպատակով,
4. Համակարգը պետք է տվյալներ ուղարկի հաստատված հաշվարկների վերաբերյալ Գանձապետարանի հետ կապերի համար պատասխանատու վարչություն,
5. Համակարգը պետք է տվյալներ ուղարկի հաստատված հաշվարկների վերաբերյալ Հարկ վճարողների հետ կապերի համար պատասխանատու վարչություն՝ հարկ վճարողին տեղեկացնելով հաստատման մասին:

Վերադարձի հաստատման մոդուլը բաղկացած է չորս ենթամոդուլներից՝ պարտավորություններն ու հաշվանցումները ցուցադրող ենթամոդուլ Պարտավոր-

րությունների ցանկ էջի միջոցով, ենթամոդուլ արդեն հաստատված վերադարձները դիտելու համար Հաստատված ԱԱՀ հաշվարկներ էջի միջոցով, ենթամոդուլ տեղեկություններ ուղարկելու Գանձապետարանի հետ կապերի համար պատասխանատու վարչություն Գանձապետարան ուղարկված տվյալներ էջի միջոցով, և ենթամոդուլ տեղեկություններ ուղարկելու Հարկ վճարողների հետ կապերի համար պատասխանատու վարչություն Ծանուցում հարկ վճարողին ԱԱՀ-ի ավտոմատ հետ վերադարձի վերաբերյալ էջի միջոցով:

3.6.1 Համակարգի պարտավորություններ և հաշվանցումներ ենթամոդուլը ավտոմատ գեներացված էջ է, որտեղ թվարկված են հարկ վճարողի պարտավորությունները և ցուցադրված են հաշվանցումները: Ստորև նշվում է Պարտավորությունների ցանկ էջի հիմնական ֆունկցիոնալությունը.

- Պարտավորությունների ցանկ էջը պետք է ներառի հաշվարկի ընդհանուր տվյալները, պարտավորությունների ցանկը, հաշվանցումները և վերջնական գումարները:
- Հաշվարկի ընդհանուր տվյալները հիմնականում ներառում են հաշվարկի մասին ընդհանուր տեղեկություններ, մասնավորապես հաշվարկի համարը, հարկ վճարողի ՀՎՀՀ-ն, կազմակերպության անվանումը և այլն:
- էջի Պարտավորությունների ցանկ բաժինը պետք է ներառի թվարկված հարկատեսակները և տուգանքները, նրանց համապատասխան պարտավորությունները բաշխված գումարներով և հաշվանցումները:
- Հարկ վճարողի պարտավորությունները պետք է գեներացվեն՝ կիրառելով հետևյալ մոտեցումը.
  - Համակարգը պետք է ստուգի հաշվարկում նշված ժամանակաշրջանի համար բոլոր պարտավորություններն ըստ հարկատեսակների կամ տուգանքի:
  - Տվյալները պետք է վերբեռնել Հարկատու 3 տվյալների բազայից:
- Հաշվանցումները պետք է գեներացնել հետևյալ հաջորդական փուլերի իրականացմամբ.
  - Եթե հարկ վճարողը հաշվարկում նշել է պարտավորությունների ցանկը (ԱԱՀ-ի հաշվարկ, կետ 29) և յուրաքանչյուր պարտավորության մարման համար հատկացված գումարը,
    - համակարգը պետք է ավտոմատ կերպով մարի պարտավորությունները՝ ըստ հարկ վճարողի կողմից տրամադրած ցանկի հերթականության,
    - եթե դրանից հետո մնում են չմարված այլ պարտավորություններ, համակարգը պետք է մարի նաև մնացած պարտավորությունները օրենքով սահմանված կարգով:
  - Եթե հարկ վճարողը հաշվարկում չի նշել պարտավորությունների մարման կարգը, պարտավորությունները պետք է մարվեն օրենքով սահմանված կարգով:

Բոլոր հաշվանցումների ընդհանուր գումարը համարվում է Հաշվանցման ենթակա գումար:

- Պարտավորությունները մարելուց հետո մնացած գումարը պետք է համարել վերադարձման ենթակա: Եթե հարկ վճարողն իր հաշվարկում նշել է գումար, որն ուղղված է հետագա պարտավորությունների մարմանը (ԱԱՀ-ի հաշվարկ, կետ 30), համակարգն ավտոմատ կերպով պետք է գումարը վերադարձման ենթակա գումարից ուղղի հետագա պարտավորությունների մարմանը, որը և համարվում է Վերջնական գումար հետագա մարումների համար:
- Վերադարձման ենթակա գումարից մնացած գումարը համարվում է ԱԱՀ-ի վերադարձի գումար, որը պետք է վերադարձնել հարկ վճարողի բանկային հաշվին, որը և համարվում է Վերադարձման ենթակա վերջնական գումար:
- Ամփոփելով վերը նշված մոտեցումները, նշվում է, որ համակարգը պետք է ավտոմատ կերպով գեներացնի հետևյալ երեք գումարները.
  - Հաշվանցման ենթակա գումար,
  - Վերջնական գումար հետագա պարտավորությունների մարման համար,
  - Վերադարձման ենթակա վերջնական գումար:

Ստորև տրվում է Պարտավորությունների ցանկ էջի դաշտերի սահմանումները.

**Աղյուսակ 7 Պարտավորությունների ցանկ էջ**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Փաստ. #	Text box; Disabled			Ցուցադրում է փաստաթղթի համարը հաշվարկից:
ՀՎՀՀ	Text box; Disabled			Ցուցադրում է ՀՎՀՀ-ն հաշվարկից:
ԱԱՀ ՎՀՀ	Text box; Disabled			Ցուցադրում է ԱԱՀ ՎՀՀ-ն հաշվարկից:
Կազմակերպության անվանում	Text box; Disabled			Ցուցադրում է կազմակերպության անվանումը հաշվարկից:
Գտնվելու վայրը	Text box; Disabled			Ցուցադրում է գտնվելու վայրը հաշվարկից:
Ներկայացման ամսաթիվ	Calendar Box; Disabled			Ցուցադրում է ներկայացման ամսաթիվը հաշվարկից:
Ժամանակաշրջան	Text box; Disabled			Ցուցադրում է ժամանակաշրջանը հաշվարկից:
Պահանջի գումար	Text box; Disabled			Ցուցադրում է պահանջի գումարը հաշվարկից:
Գումար հետագա մարումների համար	Text box; Disabled			Ցուցադրում է հետագա պարտավորությունների մարման համար գումարը հաշվարկից:
Վերադարձնել բանկային հաշվին	Text box; Disabled			Ցուցադրում է բանկային հաշվին վերադարձվող գումարը հաշվարկից:
Միավոր	Text box; Disabled			Ցուցադրում է հաշվարկի միավորը:
Պարտավորություններ	Column			Ցուցադրում է հարկ վճարողի պարտավորությունների ցանկը:
Հաշվանցումներ	Column			Ցուցադրում է հաշվանցումների ցանկը:
ԱԱՀ	Text box; Disabled			Ցուցադրում է ԱԱՀ-ի պարտավորությունն ու հաշվանցումը:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Ակցիզ	Text box; Disabled			Ցուցադրում է ակցիզային հարկի պարտավորությունն և հաշվանցումը :
Շահութահարկ	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է շահութահարկի պարտավորությունն և հաշվանցումը:
1 % շահութահարկ (նվազագույն հարկ)	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է 1 % շահութահարկի (նվազագույն հարկ) պարտավորությունն և հաշվանցումը:
Շահութահարկ ոչ ռեզիդենտի	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է շահութահարկի ոչ ռեզիդենտի պարտավորությունն և հաշվանցումը:
Եկամտահարկ	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է եկամտահարկի պարտավորությունն և հաշվանցումը:
Սոց.	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է սոց վճարների պարտավորությունն և հաշվանցումը:
Հաստատագրված	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է հաստատագրված վճարի պարտավորությունն և հաշվանցումը:
Տուգանք	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում տուգանքի պարտավորությունն և հաշվանցումը:
Այլ	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է այլ պարտավորություններն և հաշվանցումը:
Հաշվանցման ենթակա գումար	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է հաշվանցման ընդհանուր գումարը:
Վերջնական գումար հետագա մարումների համար	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է վերջնական գումարը, որը պահվում է հետագա պարտավորությունների մարման համար:
Վերադարձման ենթակա վերջնական գումար	Text Box; Multi-line; Disabled			Ցուցադրում է վերադարձման ենթակա վերջնական գումարը:
Տպել	Button			Տպել էջի բովանդակությունը:
Հետ դեպի նախորդ էջ	Button			Հետ դեպի Գնահատված հաշվարկներ դասակարգված ըստ շեմի էջը:

3.6.2 Համակարգի Հաստատված վերադարձներ ենթամոդուլը նպատակ ունի ցուցադրել հաստատված ԱԱՀ հաշվարկների ցանկը: Ենթամոդուլի հիմնական ֆունկցիոնալությունն է.

- Հաստատված ԱԱՀ հաշվարկներ էջը ներառում է երկու բաժին, ցուցադրելու հաստատված վերադարձների վերաբերյալ տեղեկատվությունը և իրականացնելու ցանկում որոնումը:
- Էջի հիմնական նպատակն է ցուցադրել համակարգում առկա հաստատված վերադարձների ցանկը, որոնց տվյալները արդեն ուղարկված են Գանձապետարան:
- Էջը պարունակում է Պարտավորությունների ցանկ էջի հետ կապը, որը օգտագործողին հնարավորություն է տալիս դիտելու հարկ վճարողի

պարտավորություններին և հաշվանցումներին առնչվող ամբողջ տեղեկությունը:

Ստորև նշվում են Հաստատված ԱԱՀ հաշվարկներ էջի դաշտերի սահմանումները.

**Աղյուսակ 8 Հաստատված ԱԱՀ հաշվարկներ էջ**

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
<b>Որոնման բաժին</b>				
Փաստ. #	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է փաստաթղթի համարը:
ՀՎՀՀ	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է ՀՎՀՀ-ն:
ԱԱՀ ՎՀՀ	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է ԱԱՀ ՎՀՀ-ն:
Կազմակերպության անվանումը	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է կազմակերպության անվանումը:
Գտնվելու վայր	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է գտնվելու վայրը:
Ներկայացման ամսաթիվ	Calendar Box	Ոչ պարտադիր	Ընթացիկ ամսաթիվ	Սահմանում է հաշվարկի ներկայացման ամսաթվի միջակայքը:
Ժամանակաշրջան – ամիս և եռամսյակ	Dropdown	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է տարվա բոլոր եռամսյակների և ամիսների ցանկը, ինչպես նաև “Բոլորը” արժեքը. <b>Բոլորը եռամսյակներ</b> – I եռամսյակ – II եռամսյակ – III եռամսյակ – IV եռամսյակ <b>Ամիսներ</b> – հունվար – փետրվար – մարտ... – – դեկտեմբեր
Ժամանակաշրջան – Տարի	Dropdown	Ոչ պարտադիր	Ընթացիկ տարի	Սահմանում է տարիների ցանկը 2000-ից մինչև 2020-ը:
Պահանջի գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է պահանջի գումարը:
Գումար հետագա մարումների համար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է առաջիկա պարտավորությունները մարելու համար ենթակա գումարը:
Վերադարձնել բանկային հաշվին	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է վերադարձման գումարը բանկային հաշվին:



Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
Միավորների միջակայք	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է միջակայք գնահատված հաշվարկների միավորների համար:
Ավտոմատ վերադարձի ենթակա է	Dropdown box	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է հաշվարկի կարգավիճակը՝ նշված է, որպես ավտոմատ վերադարձման ենթակա կամ ոչ: Թվարկված կետերը հետևյալն են. – Բոլորը – Այո – Ոչ
Ավտոմատ մերժում	Dropdown box	Ոչ պարտադիր	“Բոլորը”	Սահմանում է հաշվարկի ավտոմատ մերժման կարգավիճակը: Թվարկվում են հետևյալ կետերը. – Բոլորը – Այո – Ոչ
Հաշվանցված գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է հաշվանցված գումարը:
Վերջնական գումար հետագա մարումների համար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է վերջնական գումարը հետագա մարումների համար:
Վերադարձի վերջնական գումար	Text box	Ոչ պարտադիր		Սահմանում է վերադարձի վերջնական գումարը:
Գտնել	Button			Կատարել որոնում արդյուսակում ելնելով սահմանված որոնման պարամետրերի արժեքներից:
Նոր որոնում	Button			Սահմանել որոնման պարամետրերը նախնական արժեքներով:
<b>Աղյուսակ</b>				
#	Column			Ցուցադրում է հերթական համարը:
Փաստաթղթի #	Column			Ցուցադրում է փաստաթղթի համարը հաշվարկից:
ՀՎՀՀ	Column			Ցուցադրում է ՀՎՀՀ-ն հաշվարկից:
ԱԱՀ ՎՀՀ	Column			Ցուցադրում է ԱԱՀ ՎՀՀ-ն հաշվարկից:
Կազմակերպության անվանում	Column			Ցուցադրում է կազմակերպության անվանումը հաշվարկից:
Գտնվելու վայր	Column			Ցուցադրում է կազմակերպության գտնվելու վայրը հաշվարկից:
Ներկայացման ամսաթիվ	Column			Ցուցադրում է հաշվարկի ներկայացման ամսաթիվը հաշվարկից:
Ժամանակաշրջան	Column			Ցուցադրում է հաշվարկի ժամանակաշրջանը հաշվարկից:
Պահանջի գումարը	Column			Ցուցադրում է պահանջի գումարը հաշվարկից:
Գումար հետագա մարումների համար	Column			Ցուցադրում է առաջիկա պարտավորությունների մարման համար գումարը հաշվարկից:
Վերադարձնել բանկային հաշվին	Column			Ցուցադրում է բանկային հաշվին վերադարձման ենթակա գումարը հաշվարկից:
Միավոր	Column			Ցուցադրում է հաշվարկի միավորը ելնելով գնահատման արդյունքից:

Դաշտ	Տիպ	Ատրիբուտ	Նախնական արժեք	Նկարագրություն, վավերացման կանոններ
